

### ԷԼԻՆԱ ԳԵՂԱՄՅԱՆ

ՀՀ գլխավոր հարկադիր կատարողի օգնական,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ

### ԱՐՄԱՆ ՀԱԿՈՒԶԱՆՅԱՆ

«Վարդանյան և գործընկերներ» ՍՊԸ, իրավաբան

## ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՈՉ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ

Վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքի հռչակումն ինքնին, առանց վնասի հատուցման նախապայմանների հստակեցման, դեռ բավարար չէ վնասի հատուցումը երաշխավորելու համար:

Սույն աշխատանքում վերլուծվում են՝ հայրենական և արտասահմանյան օրենսդրության, տեսական աղբյուրների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Վճռաբեկ դատարանի և Եվրոպական միության արդարադատության դատարանի իրավական դիրքորոշումների համատեքստում վերլուծվում են ոչ նյութական վնասի առկայությունը և վարչարարության ոչ իրավաչափությունը՝ որպես վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման նախապայմաններ:

Արդյունքում, հեղինակները եզրակացնում են, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ հիմնարար իրավունքի կամ ազատության խախտման հանգամանքը չի կարող քննության առարկա դառնալ վնասի հատուցման վարույթում, իսկ ոչ նյութական վնասի առկայության հանգամանքը, որպես ընդհանուր կանոն, պետք է ներառվի ապացուցման առարկայում, և տուժողը պետք է կրի ոչ նյութական վնասի առկայության հանգամանքի ապացուցման բեռը:

*Հիմնարար - ոչ իրավաչափ վարչարարություն, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք, ոչ նյութական վնաս, հիմնարար իրավունքների և ազատությունների խախտմամբ պատճառված վնաս, ոչ նյութական վնասի հատուցում, վնասի հատուցման նախապայմաններ:*

Սահմանադրությամբ<sup>1</sup> վարչարարությամբ պատճառված վնասի, այդ թվում՝ ոչ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքի ամրագրումը (62-րդ հոդված) դեռևս չի կարող դիտարկվել որպես՝ միայն վնասի առկայության դեպքում վարչարարությամբ պատճառված վնասի փոխհատուցման իրավական երաշխիք: Վնասի փոխհատուցման համար պարտադիր է նաև վնասի փոխհատուցման նախապայմանների առկայությունը: Միջազգային լայն ճանաչում ունեցող սկզբունքի համաձայն՝ անձի համար պետք է հասանելի լինի ոչ միայն իր իրավունքները խախտող ակտի վերացումն ու խախտված իրավունքների ու օրինական շահերի վերականգնումը, այլև այդպիսի ակտով պատճառված վնասների հատուցումը: Թերևս սա է պատճառը, որ ժամանակակից գրեթե բոլոր իրավական համակարգերում հնարավոր է հանդիպել այնպիսի իրավակարգավորումների, որոնք հնարավորություն են տալիս ֆիզիկական կամ իրավաբանական անձին, համապատասխան վավերապայմանների առկայության դեպքում ստանալու փոխհատուցում՝ իշխանության մարմինների, մասնավորապես՝ վարչական մարմինների գործունեության ընթացքում իրենց պատճառված վնասի

համար<sup>2</sup>:  
Եվրոպական միության արդարադատության դատարանը, անդրադառնալով պետության կողմից պատճառված վնասի (այդ թվում՝ ոչ նյութական վնասի) հատուցման նախապայմաններին, դրանց շարքում առանձնացրել է հետևյալ չորսը.  
1) օրենքի խախտված դրույթը վերաբերում է անձի իրավունքներին,  
2) խախտումը բավականաչափ լուրջ է,  
3) պատճառվել է վնաս,  
4) առկա է անմիջական պատճառական կապ խախտման և պատճառված վնասի միջև<sup>3</sup>:  
Վնասի փոխհատուցման նախապայմանների վերաբերյալ կայուն իրավական պրակտիկա է ձևավորել Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ, ընդհանուր առմամբ, վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման պայմանը վարչական մարմնի իրավական ակտի, գործողության կամ անգործության ոչ իրավաչափ լինելն է և դրանց ու պատճառված վնասի միջև պատճառահետևանքային կապը<sup>4</sup>: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը, ըստ էության, նույնացրել է վարչարարությամբ պատճառված գույքային և ոչ գույքային վնասի փոխհատուցման նախապայմանները՝ երկու դեպքում էլ

որպես այդպիսիք սահմանելով՝

- 1) վարչարարության ոչ իրավաչափությունը,
- 2) վնասի առկայությունը,
- 3) վնասի և ոչ իրավաչափ վարչարարության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի<sup>6</sup> (այսուհետ՝ Օրենք)՝ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի փոխհատուցմանը վերաբերող 104-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ ի տարբերություն վարչարարությամբ պատճառված գույքային վնասի, որի փոխհատուցման հիմքը ոչ իրավաչափ վարչարարությունն է ինքնին, ոչ գույքային վնասի դեպքում վարչարարության ոչ իրավաչափության հաստատումը դեռևս վնասի փոխհատուցման լիարժեք նախապայման չէ: Այսպես, ի տարբերություն ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված գույքային վնասի հատուցման, որն ըստ էության փոխհատուցում է ինքնին վարչական մարմնի ոչ իրավաչափ գործելու դիմաց, վարչարարությամբ պատճառված ոչ գույքային, այդ թվում՝ ոչ նյութական<sup>7</sup> վնասի հատուցումը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում նաև (մեր կարծիքով՝ նախևառաջ) ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտման դիմաց փոխհատուցում է: Հետևաբար, ոչ նյութական վնասի հատուցման համար, բացի վարչարարության ոչ իրավաչափությունից, անհրաժեշտ է նաև, որ վնասը պատճառված լինի անձի հիմնարար իրավունքների խախտման միջոցով: Ուստի վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման առաջնահերթ նպատակն է՝ խախտված հիմնարար իրավունքի վերականգնումը:

Առհասարակ, հանրային իշխանության, այդ թվում նաև՝ վարչարարության իրականացումը ոչ իրավաչափ համարելու հիմքում, սովորաբար հենց դրա արդյունքում, հիմնարար իրավունքների խախտումն է՝: Դժվար է պատկերացնել մի իրավիճակ, երբ ոչ իրավաչափ վարչարարությունը չհանգեցնի անձի որևէ հիմնարար իրավունքի խախտմանը: Հիմնարար իրավունքի խախտմամբ պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցումը հիմնարար իրավունքների պաշտպանության կոնվենցիոն և սահմանադրական երաշխիքների կարևոր բաղկացուցիչն է: Հաշվի առնելով նաև այն, որ 2015 թվականի Սահմանադրության փոփոխություններով ամրագրում է ստացել նաև պատշաճ վարչարարության իրավունքը՝ որպես անձի հիմնարար իրավունք պարզ է դառնում, որ վարչարարության՝ որոշակի փաստական հետևանքներ

առաջացնող ոչ իրավաչափության գրեթե բոլոր դեպքերում հիմնարար իրավունքի խախտումն առկա է՝ առնվազն պատշաճ վարչարարության հիմնարար իրավունքի խախտման համատեքստում:

Այսպիսով, ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման նախապայման է ոչ թե պարզապես վարչական մարմնի գործողությունը, անգործությունը կամ վարչական ակտը ոչ իրավաչափ ճանաչված լինելը, այլ այդպիսի գործողության, անգործության կամ վարչական ակտի ոչ իրավաչափության հետևանքով տուժողի հիմնարար իրավունքի խախտումը: Այս համատեքստում քննարկման ենթակա է այն հարցը, թե արդյոք վնասի փոխհատուցման պահանջի բավարարման համար տուժողի հիմնարար իրավունքի խախտումը պետք է հաստատված լինի վարչարարության իրավաչափության սկզբնական վարույթում, թե այն, ի թիվս վնասի հատուցման մյուս՝ ոչ նյութական վնասի և պատճառահետևանքային կապի առկայության վավերապայմանների, ենթակա է քննության վնասի փոխհատուցման վարույթի շրջանակում:

Օրենքի համապատասխան դրույթների վերլուծությունից բխում է, որ այս հարցի վերաբերյալ այն հստակ կարգավորում չի բովանդակում և սահմանափակվում է նշելով, որ ոչ նյութական վնասը պետք է պատճառված լինի որոշակի խումբ հիմնարար իրավունքների խախտման միջոցով, ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով: Անդրադառնալով հիմնարար իրավունքի՝ ոչ նյութական վնասի փոխհատուցման հիմք հանդիսացող խախտմանը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերջիններիս կողմից կատարված խախտումը չպետք է լինի ենթադրյալ խախտում. այն պետք է հաստատված լինի դատարանի կամ քրեական հետապնդման մարմնի կողմից՝:

Վարչարարության ոչ իրավաչափության հաստատման վարչական վարույթը կամ դատարանի կողմից այդպիսի պահանջով գործի քննությունը ենթադրում են, որ տուժողը պետք է հայցի կամ դիմումի հիմքում դնի բոլոր այն հանգամանքները, որոնք, իր կարծիքով, պետք է հիմք հանդիսանան համապատասխան վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը ոչ իրավաչափ ճանաչելու համար: Վարչական ակտը, անգործությունը կամ գործողությունն անվավեր կամ ոչ իրավաչափ ճանաչելու մասին վարչական ակտի կայացմամբ և դրա անբողոքարկելի դառնալով կամ համապատասխան դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելով՝ տուժողը կորցնում է վարչարարության իրավաչափությունը հետագայում (թեկուզև այլ հիմքերով) վիճարկելու հնարավոր

րությունը՝ միևնույն անձանց միջև, միևնույն առարկայի վերաբերյալ անբողոքարկելի վարչական ակտի կամ օրինական, ուժի մեջ մտած դատական ակտի առկայության հիմքով՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Այլ կերպ ասած՝ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտումը վարչարարությունը ոչ իրավաչափ ճանաչելու առանձին հիմք է, և այն դեպքում, երբ այդպիսի իրավունքի խախտումը չի հաստատվել վարչարարության ոչ իրավաչափության հաստատման վարույթում, այն հետագայում ոչ գույքային վնասի փոխհատուցման վարույթում չի կարող քննության առարկա դառնալ և վարչական մարմնի կամ դատարանի կողմից հաստատվել:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա պարզ է դառնում, որ ի թիվս Վճռաբեկ դատարանի կողմից առանձնացված՝ ոչ գույքային վնասի փոխհատուցման նախապայման հանդիսացող ոչ իրավաչափ վարչարարության, վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի փոխհատուցման նախապայման է նաև ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով տուժողի որոշակի հիմնարար իրավունքի խախտումը: Ընդ որում, հիմնարար իրավունքի խախտման հանգամանքը ևս, ինչպես վարչարարության ոչ իրավաչափությունը, նախապես՝ մինչ վարչական մարմնին վնասի փոխհատուցման դիմում ներկայացնելը, պետք է հաստատված լինեն սահմանված կարգով:

Հատկանշական է, որ հիմնարար իրավունքի խախտումը նախապես, վարչարարության ոչ իրավաչափության հաստատման վարույթում հաստատված լինելու վերաբերյալ մի շարք գործերով դիրքորոշում է արտահայտվել նաև Վարչական դատարանի կողմից: Մասնավորապես, թիվ ՎԳ/2108/05/19 վարչական գործով 05.11.2019թ. կայացված վճռով Վարչական դատարանն արձանագրել է. «Տվյալ դեպքում հայցվորը, որպես ոչ իրավաչափ վարչարարությամբ խախտված իրավունքներ, վկայակոչել է իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի և սեփականության իրավունքի խախտումները: Մինչդեռ, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի վերը նշված իրավական դիրքորոշումները՝ դատարանն արձանագրում է, որ Վարչական դատարանի 15.11.2018թ. վճռով կամ որևէ այլ դատական ակտով կամ քրեական հետապնդման մարմնի որոշմամբ (ընդգծումը մերն է) ոչ սեփականության իրավունքի, ոչ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի խախտման փաստ հաստատված չէ: Ուստի, տվյալ դեպքում առկա չէ ոչ նյութական վնասի պահանջ ներկայացնելու անհրաժեշտ պայմանը, այն է՝ դատարանի կողմից

հաստատված՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերով և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու որևէ հիմնական իրավունքի խախտման փաստը, որպիսի պայմաններում ոչ նյութական վնասի հատուցումը ենթակա է մերժման»: Վարչական դատարանը այսպիսի եզրահանգման է եկել նաև թիվ ՎԳ/2308/05/18 վարչական գործով 03.08.2018թ. կայացված և օրինական ուժի մեջ մտած վճռով:

Վարչական դատարանը, սակայն, վերը հիշատակված գործերով, հիմք ընդունելով Վճռաբեկ դատարանի համապատասխան դիրքորոշումը, հիմնարար իրավունքի խախտումը փաստելու բավարար հիմք է համարել միայն դատարանի կամ քրեական հետապնդման մարմնի որոշումը՝ այդ ցանկում չներառելով վարչական մարմնի կողմից խախտումը համապատասխան ակտով հաստատելը: Մինչդեռ՝ նման մոտեցումը հիմք ընդունելու դեպքում՝ վարչարարության վարչական կարգով բողոքարկման արդյունքում կայացված վարչական ակտով այդպիսի խախտումը հաստատվելը, փաստորեն, բավարար հիմք չի հանդիսանա հիմնարար իրավունքի խախտման առկայությունը հաստատված համարելու համար: Այս մոտեցումը, կարծում ենք՝ հիմնավորված չէ, քանի որ կարող է վարչարարությունը վարչական կարգով բողոքարկող սուբյեկտին դնել էականորեն ավելի անբարենպաստ դրության մեջ, քան վերջինս կլիներ, եթե դիմեր վարչարարության դատական կարգով բողոքարկմանը: Միևնույն ժամանակ, խիստ խնդրահարույց է քրեական հետապնդման մարմնի որոշումը վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման գործերով հիմնարար իրավունքի խախտման առկայությունը հավաստող բավարար ապացույց դիտելը: Այսպես, քրեական հետապնդման մարմնի որոշում է, օրինակ, քննիչի որոշումը՝ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործը կարճելու մասին: Այս որոշման նպատակը և էությունը, սակայն, քրեական գործը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու փաստական և իրավական հիմքերը ներկայացնելն է, և քրեական հետապնդման մարմնիների՝ դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի խնդիրը քրեական գործի մինչդատական վարույթում համապատասխան որոշումներ կայացնելիս վարչարարության ոչ իրավաչափությունը քննարկելը և համապատասխան իրավունքի կամ ազատության խախտման հաստատումը չէ: Այսպիսով, կարծում ենք՝ քրեական հետապնդման մարմնիների որոշումները վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման նախապայման համարվող՝ հիմնարար իրավունք-

ների կամ ազատությունների խախտման հանգամանքն ինքնին (by default<sup>11</sup>) հաստատված համարելու մոտեցումն արդարացված չէ՝ նաև այն հիմնավորմամբ, որ վնասի փոխհատուցման պայման է ոչ թե պարզապես հիմնարար իրավունքի խախտման առկայությունը, այլ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով այդպիսի խախտումը, իսկ վարչարարության ոչ իրավաչափության հարցը ևս այդ մարմինների կողմից, ըստ էության, քննարկման առարկա չի դառնում:

Վերոգրյալի հիման վրա ակնհայտ է, որ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հիմք համարվող հիմնարար իրավունքի խախտումը կարող է հաստատված համարվել ինչպես դատարանի, այնպես էլ վարչական մարմնի համապատասխան ակտով, սակայն քրեական հետապնդման մարմնի որոշումն ինքնին հիմնարար իրավունքի կամ ազատության խախտման փաստը հավաստող բավարար ապացույց դիտելը խիստ խնդրահարույց է: Այսպիսով, վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի փոխհատուցման առաջին նախապայմանը վարչարարության ոչ իրավաչափությունը, այդ թվում՝ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում տուժողի հիմնարար իրավունքի կամ ազատության խախտման փաստը հաստատված լինելն է:

Վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի առկայությունը փաստելու հարցում հիմնարար նշանակություն ունի նաև ոչ նյութական վնասի առկայության՝ որպես վնասի հատուցման նախապայմանի քննարկումը, մասնավորապես, այն հարցերի պատասխանը, թե ինչպես, ապացուցման ինչ միջոցներով պետք է հիմնավորվի ոչ նյութական վնասի առկայությունը, ով է կրում ոչ նյութական վնասի առկայության ապացուցման բեռը և արդյոք վնասի փոխհատուցման պահանջը քննող մարմինը իրավասու է մերժել ներկայացված հայցը կամ դիմումը՝ ոչ նյութական վնասի առկայությունը հաստատված չլինելու հիմքով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ) արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ չնայած այն հանգամանքին, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (այսուհետ՝ Կոնվենցիա) երաշխավորված բոլոր իրավունքների խախտման փաստն ինքնին դիտարկվում է որպես որոշակի ոչ նյութական վնասի պատճառում, այնուամենայնիվ, դատարանը բավարար չափով լուրջ ոչ նյութական վնասի առկայություն է արձանագրում միայն այն դեպքում, երբ տուժողը կրել է ակնհայտ վնասվածք՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական,

ցավ կամ տառապանք, անհանգստություն, ցանկությունների խախտում, անարդարության կամ անմարդկայնության, երկարաձգված անորոշության, կյանքի խախտման, հնարավորության իրական կորստի զգացում<sup>12</sup>:

ՄԻԵԴ-ը չի պահանջում դիմողից ներկայացնել իր կրած ոչ նյութական վնասի որևէ ապացույց<sup>13</sup>: Փոխարենը, դատարանը կիրառում է ապացուցողական չափորոշիչ՝ հիմք ընդունելով այն կանխավարկածը, որ Կոնվենցիոն իրավունքի խախտման դեպքում ոչ նյութական վնասն առկա է<sup>14</sup>: Դատարանի կողմից այս կանխավարկածն ընտրելու հիմքում այն հանգամանքն է, որ ոչ նյութական վնասի մի շարք դրսևորումներ իրենց բնութով ապացուցման ենթակա չեն<sup>15</sup>: Ընդ որում, վնասի առկայության այս կանխավարկածի հիմքում այն մոտեցումն է, թե արդյոք միջին վիճակագրական անձը մնանատիպ իրավիճակում կկրեր ոչ նյութական վնաս<sup>16</sup>:

Փոքր-ինչ այլ է, սակայն, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը: Թիվ ԵԿԳ/3296/02/14 քաղաքացիական գործով 27.12.2017թ. որոշմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «(...) Ոչ նյութական վնասի հատուցման հիմք հանդիսացող տառապանքի, մասնավորապես՝ հոգեկան տառապանքի հաստատման համար պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ մնան տառապանքը հաստատելու համար ուղղակի ապացույցներ (օրինակ՝ բժշկական փաստաթղթեր, փորձագետի եզրակացություն) *կարող են և չենրկայացվել*: Տառապանքի առկայությունը կարող է հաստատվել ցանկացած ապացույցով, այդ թվում՝ կողմի, նրա հարազատների ցուցմունքներով: Այլ կերպ ասած՝ հոգեկան տառապանքի առկայությունը հիմնավորելու համար *չափից ավելի ֆորմալ պահանջները չեն բխի հոգեկան տառապանքի առանձնահատկություններից*: Ուստի ցանկացած ապացույց, որը կարող է վկայել հոգեկան տառապանքի առկայության մասին (օրինակ՝ ձեռքակալվածին պահելու պայմանները, տևողությունը, անձի անհատական հատկանիշները՝ դյուրագրգիռությունը, ներշնչվողականությունը և այլն), պետք է գնահատվի դատարանի կողմից»:

ՄԻԵԴ-ի դիրքորոշումներով, այսպիսով, ամրապնդված է այն կանխավարկածը, որ հիմնարար իրավունքի խախտումը անպայմանորեն պատճառում է որոշակի ոչ նյութական վնաս: Սակայն, ինչպես Օրենքը և ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, այնպես էլ Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշումներով այս կանխավարկածն ուղղակիորեն չեն ամրագրել: Ավելին, Վճռաբեկ դատարանի վերը հիշատակված դիրքորոշման վերլուծության արդյուն-

քում կարող ենք պնդել, որ.

1) ոչ նյութական վնասի առկայությունը պետք է ներառվի ապացուցման առարկայում և տուժող կողմը պետք է կրի դրա ապացուցման բեռը,

2) ոչ նյութական վնասի առկայությունը հիմնավորող ապացույցների շրջանակը չպետք է սահմանափակված լինի, ընդ որում՝ դատարանը կամ վարչական մարմինը չունեն ոչ նյութական վնասի առկայությունը հաստատելու նպատակով փորձաքննություն նշանակելու, իսկ տուժողը՝ փորձագետի եզրակացություն կամ ապացուցման որևէ այլ կոնկրետ միջոց դատարան ներկայացնելու պարտավորություն,

3) ցանկացած ապացույց, որը կարող է վկայել հոգեկան տառապանքի առկայության մասին (օրինակ՝ հիմնարար իրավունքի խախտման պայմանները, տևողությունը, անձի անհատական հատկանիշները՝ դյուրագրգիռությունը, ներշնչվողականությունը և այլն), պետք է գնահատվի դատարանի կողմից: Միաժամանակ, դատարանը պետք է խուսափի ապացուցման բարձր չափանիշի սահմանման հետևանքով վնասի փոխհատուցման դիմումներն անհարկի մերժելուց<sup>17</sup>:

Այնուամենայնիվ, դատական պրակտիկայի վերլուծությունից բխում է, որ ՄԻԵԴ-ի կողմից ամրագրված՝ ոչ նյութական վնասի առկայության վերաբերյալ կանխավարկածը որոշակի առումով իր արտացոլումն է գտել նաև ներպետական իրավական պրակտիկայում: Այս հանգամանքը հավաստվում է նաև նրանով, որ Վճռաբեկ դատարանը, անդրադարձ կատարելով ՄԻԵԴ-ի վերոնշյալ մոտեցումներին, որևէ կերպ դիրքորոշում չի հայտնել դրանք չկիրառելու վերաբերյալ, ինչպիսի պայմաններում դրանց վկայակոչումը ենթադրում է Վճռաբեկ դատարանի կողմից վնասի հատուցման գործի քննության ժամանակ նաև ՄԻԵԴ-ի համապատասխան դիրքորոշումների կիրառելիության ընդգծում: Այս մոտեցումը, սակայն, կարծում ենք, հիմնավորված չէ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

*Առաջին*, Սահմանադրությամբ ամրագրված՝ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում ստանալու իրավունքը և Կոնվենցիայով ամրագրված արդարացի փոխհատուցման իրավունքն իրենց բովանդակությամբ նույնական չեն, և եթե վնասի հատուցման բոլոր վավերապայմանների առկայության դեպքում ոչ նյութական վնասի հատուցում տրամադրելը կամ չտրամադրելը ՄԻԵԴ-ի հայեցողության տիրույթում է, և փոխհատուցումը կարող է մերժվել՝ նաև նպատակահարմարությունից ելնելով, ապա վարչարարությամբ պատճառված վնասի, այդ թվում՝ ոչ նյութական վնասի դեպքում այդպիսի փոխհատուցում տրամադրելը վնասի

սի փոխհատուցման վավերապայմանների առկայության դեպքում վարչական մարմնի պարտականությունն է:

Այսպես, Կոնվենցիայի 41-րդ հոդվածն ամրագրում է համապատասխան վավերապայմանների դեպքում արդարացի փոխհատուցում հայցելու իրավունքը: Արդարացի փոխհատուցման գաղափարը բխում է միջազգային իրավունքի՝ պետության պատասխանատվության վերաբերյալ սկզբունքներից<sup>18</sup>, և դրա նպատակն է՝ վնաս կրած անձի համար ապահովել նույն դրությունը, «որում նա կլիներ, եթե նրա Կոնվենցիոն իրավունքը չխախտվեր»<sup>19</sup>: Արդարացի փոխհատուցման իրավունքի մաս կազմող՝ ոչ նյութական վնասի հատուցում հայցելու կոնվենցիոն իրավունքը և Սահմանադրությանը երաշխավորված՝ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցում ստանալու իրավունքը, սակայն, իրենց բովանդակությամբ չեն նույնանում: Չնայած այն հանգամանքին, որ Կոնվենցիայի 41-րդ հոդվածը տուժողին թույլատրում է արդարացի փոխհատուցում ստանալ՝ տուժողը չունի արդարացի փոխհատուցում ստանալու իրավունք: Կոնվենցիայի համատեքստում տուժողն ունի միայն ՄԻԵԴ-ից արդարացի *փոխհատուցում հայցելու իրավունք*<sup>20</sup>: ՄԻԵԴ-ն է որոշում՝ արդյոք համապատասխան վավերապայմանների առկայության դեպքում արդարացի փոխհատուցում տրամադրելն անհրաժեշտ է:

Մինչդեռ՝ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցում ստանալու սահմանադրական իրավունքն այլ բովանդակություն ունի. Սահմանադրությունը երաշխավորում է ոչ միայն ոչ նյութական վնասի հատուցում հայցելու, այլև հատուցում ստանալու իրավունքը: Այլ կերպ ասած, ի տարբերություն արդարացի փոխհատուցում ստանալու կոնվենցիոն իրավունքի, վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման համար անհրաժեշտ վավերապայմանների առկայության դեպքում ոչ նյութական վնասի հատուցումը հանրային իշխանության մարմինների համար պարտականություն է: Ուստի, Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման համար, անհրաժեշտ վավերապայմանների առկայության դեպքում՝ ոչ վարչական մարմինը և ոչ էլ դատարանն իրավասու չեն մերժելու վնասի փոխհատուցումը՝ նման փոխհատուցման անհրաժեշտության բացակայության, վնասի հատուցման ոչ նպատակահարմարության հիմքով:

Ընդ որում, այդ պարտականությունն առկա է՝ անկախ պատճառված ոչ նյութական վնասի բնույթից ու չափից (նշանակալիությունից): Հետևաբար,

եթե Կոնվենցիայի և ՄԻԵԳ-ի պրակտիկայի տեսանկյունից ոչ նյութական վնասի առկայության կանխավարկածի հակակշիռն այն հանգամանքն է, որ վնասի առկայության կանխավարկածն ինքնին չի ենթադրում բոլոր դեպքերում վնասի հատուցում, և դատարանն իրավասու է վնասի առկայության պայմաններում անգամ որոշակի դեպքերում փոխհատուցում չտրամադրել վարչարարությանը պատճառված ոչ նյութական վնասի դեպքում ոչ դատարանը և ոչ վարչական մարմինը նման իրավասությանը օժտված չեն:

*Երկրորդ*, իրավունքի տեսությունից հանրաճանաչ գաղափարի համաձայն՝ իրավական ցանկացած կանխավարկած որոշակի փաստական և/կամ իրավական հիմքերի առկայության պայմաններում կարող է հերքվել: Այս համատեքստում ոչ նյութական վնաս պատճառված լինելու կանխավարկածը ևս, ըստ էության, կարող է հերքվել: Վարչական վարույթի և վարչական դատավարության ապացուցման կանոններից ելնելով՝ որպես անձի համար անբարենպաստ հանգամանք, այդ կանխավարկածը հերքելու, այսինքն՝ դիմողին կամ հայցվորին ոչ նյութական վնաս պատճառված չլինելու հանգամանքի ապացուցման բեռն ինչպես վարչական վարույթում, այնպես էլ վարչական դատավարությունում կրում է վարչական մարմինը: Մինչդեռ օբյեկտիվ իրականության մեջ դժվար է պատկերացնել այնպիսի իրավիճակ, երբ վարչական մարմինը կարողանա ապացուցել տուժողին վնաս պատճառված չլինելու հանգամանքը: Դժվար է պատկերացնել նաև, թե նման դեպքում ինչ ապացույցներ կամ ապացուցման միջոցներ կարող են կիրառվել: Թերևս, միակ հնարավոր իրավիճակն այն է, երբ հայցվորը ոչ իրավաչափ ճանաչված վարչական ակտի նկատմամբ վստահության իրավունք չի ունեցել, այդ վարչական ակտի ընդունմանը հասել է, օրինակ, կեղծ փաստաթղթերի ներկայացման միջոցով: Սակայն այս օրինակը ևս, կարծում ենք, կիրառելի չէ, քանի որ Օրենքի 110-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ տվյալ դեպքում խոսք կարող է գնալ ոչ թե ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով վնաս չպատճառվելու, այլ առհասարակ վնասի փոխհատուցման իրավունքը չժագելու մասին:

Վարչարարությանը պատճառված ոչ նյութական վնասի հատուցման գործերով ոչ նյութական վնաս պատճառված լինելու վերաբերյալ կանխավարկածը ելակետ ընդունելու դեպքում ստացվում է, որ վարչարարության ոչ իրավաչափությունը հաստատված լինելու դեպքում պրակտիկայում գրեթե անհնարին է պատկերացնել այնպիսի իրավիճակ, երբ կանխավարկածը կարող է հերքվել,

իսկ ներկայացված հայցը կամ դիմումը մերժվել՝ ոչ նյութական վնաս պատճառված չլինելու հիմքով: Հետևաբար, նման պայմաններում վնասի փոխհատուցման պահանջը քննող դատարանի կամ վարչական մարմնի հիմնական գործառույթը պարզապես վնասի փոխհատուցման չափը և եղանակը որոշելն է դառնում: *Ստացվում է նաև, որ ոչ նյութական վնասի փոխհատուցման վավերապայման է ոչ թե ոչ նյութական վնաս պատճառված լինելը, այլ ոչ նյութական վնաս պատճառված չլինելը. վարչական մարմնի կողմից չապացուցվելը:*

Մինչդեռ, կարծում ենք, որ առավել նպատակահարմար և արդարացված է՝ ոչ նյութական վնաս պատճառված լինելու հանգամանքը ներառել ապացուցման առարկայում, և որպես դիմողի համար իրավաստեղծ նշանակություն ունեցող հանգամանք, վերջինիս վրա դնել այդ հանգամանքի ապացուցման բեռը: Այս դեպքում ևս կիրառելի պետք է համարվի ՄԻԵԳ-ի պրակտիկայում ամրապնդված և Վճռաբեկ դատարանի կողմից արձանագրված՝ վնասի հատուցմանն ուղղված ապացույցների հարցում ճկուն մոտեցում ցուցաբերելու վերաբերյալ կանոնը՝ վնաս պատճառված լինելու հանգամանքին իրավական գնահատական տալու հարցը թողնելով դատարանին կամ վարչական մարմնին: Այնուամենայնիվ, այս կանոնից ևս, կարծում ենք՝ իրավակիրառ պրակտիկայում կարող են որոշակի բացառություններ լինել այն դեպքերում, երբ ոչ նյութական վնասը և դրա հատուցման հիմք հանդիսացող հիմնարար իրավունքի կամ ազատության խախտումն օբյեկտիվ բնույթ են կրում: Այսինքն՝ խախտումն իր բնույթով ինքնին ենթադրում է անպայմանորեն որոշակի ոչ նյութական վնասի պատճառում: Խոսքը, մասնավորապես, պատվին, արժանապատվությանը օբյեկտիվ չափանիշներից ելնելով և անհրաժեշտաբար ենթադրվող վնաս պատճառող ոչ իրավաչափ վարչարարության մասին է: Ուստի կարծում ենք, առանձին հետազոտության առարկա է նման դեպքերում ոչ նյութական վնասի հատուցման պահանջը քննող մարմնի կողմից ապացուցման առարկայում ներառված վնասի առկայության հանգամանքը ապացուցված համարելու և տուժողի վրա միայն պատճառված վնասի չափը հիմնավորելու պարտականություն դնելու իրավական հնարավորությունը:

*Այսպիսով, ոչ իրավաչափ վարչարարության և ոչ նյութական վնասի առկայության՝ որպես վարչարարությանը պատճառված ոչ նյութական վնասի հատուցման վավերապայմանների, քննարկման արդյունքում կարող ենք եզրակացնել, որ.*

*- ի տարբերություն վարչարարությանը պատճառված գույքային վնասի հատուցման, որի դեպ-*

### ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

քում վնասի հատուցման առաջին նախապայմանը ինքնին վարչարարության ոչ իրավաչափությունն է, վարչարարությանը պատճառված ոչ նյութական վնասի հատուցման դեպքում վնասի հատուցման նախապայման է ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի կամ հիմնարար ազատության խախտումը.

- ինչպես վարչարարության ոչ իրավաչափությունը, այնպես էլ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով հիմնարար իրավունքի խախտման առկայությունը, պետք է նախապես հաստատված լինեն վարչարարության ոչ իրավաչափության վարույթում՝ դատարանի կամ վարչական մարմնի կողմից, և ոչ նյութական վնասի հատուցման վարույթում քննության առարկա լինել չեն կարող.

- վարչարարությանը պատճառված ոչ նյութական վնասի հատուցման գործերով ոչ նյութական վնասի առկայությունն ինքնին ենթադրվել և վնասի առկայության կանխավարկածը կիրառվել չի կարող, ոչ նյութական վնաս պատճառված լինելու

յու հանգամանքը, որպես ընդհանուր կանոն, պետք է ներառվի ապացուցման առարկայում, իսկ այդ հանգամանքի ապացուցման բեռը պետք է կրի տուժողը՝ վնաս պատճառված լինելու հանգամանքին իրավական գնահատական տալու հարցը թողնելով դատարանին կամ վարչական մարմնին.

- ոչ նյութական վնասի առկայությունը հիմնավորող ապացույցների շրջանակը չպետք է սահմանափակված լինի, ընդ որում՝ դատարանը կամ վարչական մարմինը չունեն ոչ նյութական վնասի առկայությունը հաստատելու նպատակով փորձաքննություն նշանակելու, իսկ տուժողը՝ փորձագետի եզրակացություն կամ ապացուցման որևէ այլ կոնկրետ միջոց դատարան ներկայացնելու պարտավորություն, և ցանկացած ապացույց, որը կարող է վկայել հոգեկան տառապանքի առկայության մասին, պետք է գնահատվի դատարանի կողմից:

<sup>1</sup> Ընդունվել է 06.12.2015թվականին, տե՛ս, ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118-րդ:  
<sup>2</sup> Տե՛ս, J. Bell and AW. Bradley, Governmental Liability: A Comparative Study, United Kingdom National Committee of Comparative Law; London: 1991, էջեր 1-2:  
<sup>3</sup> Տե՛ս, օրինակ, ԵՄ Արդարադատության դատարանի թիվ C-6/90 և C-9/90 Francovich, Bonifaci and others V Italy միացված գործերով 1991 թվականի նոյեմբերի 19-ի վճիռը (հասանելի է <http://curia.europa.eu/juris/liste.jsf?num=C-6/90>), թիվ C-46/93 Brasserie du PUcheur SA v Bundesrepublik Deutschland գործով 05.03.1996թ. վճիռը և թիվ C-48/93 The Queen v Secretary of State for Transport, ex parte: Factortame Ltd and others գործերով վճիռը (հասանելի է <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A61993CJ0046> 04.02.2022թ.):  
<sup>4</sup> Տե՛ս, թիվ ՎԳ-1/761/05/14 վարչական գործով Վճռաբեկ դատարանի 26.12.2016 թվականի որոշումը:  
<sup>5</sup> Տե՛ս, օրինակ, թիվ ԵԿԳ-0441/02/16 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 07.04.2018թ. որոշումը:  
<sup>6</sup> Ընդունվել է 18.02.2004թ. (տե՛ս ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413-րդ):  
<sup>7</sup> Հարկ ենք համարում նշել, որ ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, որը վնասն ըստ տեսակների դասակարգում է՝ հիմքում դնելով դրա նյութական և ոչ նյութական լինելը, Օրենքը վնասը դասակարգում է գույքային և ոչ գույքային տեսակների՝ ոչ գույքային վնաս հասկացության ներքո ներառելով ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքի իմաստով ոչ նյութական վնասը (հոգեկան ցավը, տառապանքը, այդ թվում՝ հիմնարար իրավունքների խախտմամբ պատճառված վնասը), այնպես էլ կյանքին և առողջությանը պատճառված վնասը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր մոտեցմամբ, կյանքին և առողջությանը պատճառված վնասի հատուցման հիմնախնդիրներն էականորեն տարբերվում են անձի հոգեկան ամբողջականության խախտման հետևանքով պատճառված վնասի հիմնախնդիրներից, սույն աշխատանքի շրջանակում օգտագործվում է առավելապես «ոչ նյութական վնաս» հասկացությունը՝ դրա ներքո հասկանալով հիմնարար իրավունքների խախտման հետևանքով տուժողի հոգեկան ամբողջականության խախտմամբ պատճառված վնասը, այլ կերպ ասած՝ ոչ իրավաչափ վարչարարությանը (օրենքով նախատեսված դեպքերում՝ մաս իրավաչափ վարչարարությանը) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (անհատ ձեռնարկատերերին) վերջիններիս հիմնարար իրավունքների խախտմամբ (ներառյալ՝ պատվին, արժանապատվությանը, գործարար համբավին) պատճառված ֆիզիկական կամ հոգեկան ցավը կամ տառապանքը:  
<sup>8</sup> Տե՛ս, Alexia Solomou, The Contribution of the European Court of Human Rights and the Inter-American Court of Human Rights to the Emergence of a Customary International Rule of Just Satisfaction and the Creative Expansion of its Scope, էջ 2 (հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.corteidh.or.cr/tablas/r34034.pdf>):  
<sup>9</sup> Տե՛ս, I. Stribis, Damages for the Infringement of Human Rights by the Public Authority in Greece, էջ 6:  
<sup>10</sup> Տե՛ս, թիվ ԵԿԳ-3296/02/14 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 27.12.2017 թվականի որոշումը:  
<sup>11</sup> Legal Terms and Definitions <https://dictionary.law.com/Default.aspx?typed=by%20default&type=1>:

<sup>12</sup> Տե՛ս, Varnava and others v. Turkey, App. Nos. 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90, 16073/90, գործով ՄԻԵԴ-ի վճռի 224-րդ պարբերությունը:

<sup>13</sup> Տե՛ս, Gridin v. Russia, App. No. 4171/04, (Eur. Ct. H.R. June 1, 2006), գործով ՄԻԵԴ-ի վճռի 20-րդ պարբերությունը. Firstov v. Russia, App. No. 42119/04, (Eur. Ct. H.R. February 20, 2014) գործով վճռի 49-րդ պարբերությունը:

<sup>14</sup> Տե՛ս, Apicella v. Italy, App. No. 64890/01, (Eur. Ct. H.R. March 29, 2006) գործով ՄԻԵԴ-ի վճռի 93-րդ պարբերությունը:

<sup>15</sup> Տե՛ս, Peck v. United Kingdom, App. No. 44647/98, (Eur. Ct. H.R. January 28, 2013) գործով ՄԻԵԴ-ի վճռի 118-րդ պարբերությունը:

<sup>16</sup> Տե՛ս, Franz Bydlinski, Methodological Approaches to the Tort Law of the ECHR, in Tort Law In The Jurisprudence Of The European Court Of Human Rights, para. 190 (Attila Fenyves, Ernst Karner, Helmut Koziol & Elisabeth Steiner eds., 2011):

<sup>17</sup> Գատական արակալիկայում հանդիպում են նաև նման դեպքեր, օրինակ, թիվ ՎԳ/10865/05/18 վարչական գործով Վարչական դատարանը մերժել է հայցը՝ ոչ նյութական վնասի առկայության վերաբերյալ բավարար սպացույցների բացակայության հիմքով:

<sup>18</sup> Տե՛ս, Cyprus v. Turkey գործով ՄԻԵԴ-ի վճռի 40-րդ պարբերությունը:

<sup>19</sup> Տե՛ս, Etnija protiv nacije, Božidar Jakšić, Filozofija I Društvo 2006 (31), 2006, էջ 465:

<sup>20</sup> Տե՛ս, Radivojevic, Zoran & Raicevic, Nebojsa. (2020). State Liability for Non-Pecuniary Damages in the Jurisprudence of the European Court of Human Rights, Одговорност Држава за Нематеријалну Штету у Јуриспруденцији Европског Суда За Људска Права. Теме. Xviv. 17-32. 10.22190/Teme191114006r., էջեր 14 (հասանելի է՝ [https://www.researchgate.net/publication/341120180\\_STATE\\_LIABILITY\\_FOR\\_NON-PECUNIARY\\_DAMAGES\\_IN\\_THE\\_JURISPRUDENCE\\_OF\\_THE\\_EUROPEAN\\_COURT\\_OF\\_HUMAN\\_RIGHTS\\_ODGOVORNOST\\_DRZAVA\\_ZA\\_NEMATERIJALNU\\_STETU\\_U\\_JURISPRUDENCIJI\\_EVROPSKOG\\_SUDA\\_ZA\\_LU\\_DSKA\\_PRAVA20.02.2022p.](https://www.researchgate.net/publication/341120180_STATE_LIABILITY_FOR_NON-PECUNIARY_DAMAGES_IN_THE_JURISPRUDENCE_OF_THE_EUROPEAN_COURT_OF_HUMAN_RIGHTS_ODGOVORNOST_DRZAVA_ZA_NEMATERIJALNU_STETU_U_JURISPRUDENCIJI_EVROPSKOG_SUDA_ZA_LU_DSKA_PRAVA20.02.2022p.)):

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Alexia Solomou, The Contribution of the European Court of Human Rights and the Inter-American Court of Human Rights to the Emergence of a Customary International Rule of Just Satisfaction and the Creative Expansion of its Scope, 2014, 22 էջ (<https://www.corteidh.or.cr/tablas/r34034.pdf> հղումը 20.02.2022թ. դրությամբ):

2. Bydlinski, Franz. «Methodological Approaches to the Tort Law of the ECHR». Tort Law in the Jurisprudence of the European Court of Human Rights, edited by Attila Fenyves, Ernst Karner, Helmut Koziol and Elisabeth Steiner, Berlin, Boston: De Gruyter, 2011, էջեր 29-128. (<https://doi.org/10.1515/9783110260007.29J> հղումը 20.02.2022թ. դրությամբ):

3. Bell and AW. Bradley, Governmental Liability: A Comparative Study, United Kingdom National Committee of Comparative Law, 1991, 294 էջ:

4. Franz Bydlinski, Methodological Approaches to the Tort Law of the ECHR, in Tort Law In The Jurisprudence Of The European Court Of Human Rights (Attila Fenyves, Ernst Karner, Helmut Koziol & Elisabeth Steiner eds., 2011):

5. Radivojevic, Zoran & Raicevic, Nebojsa. (2020). State Liability for Non-Pecuniary Damages in the Jurisprudence of the European Court of Human Rights, Одговорност Држава за Нематеријалну Штету у Јуриспруденцији Европског Суда За Људска Права. Теме. Xviv.17-32. 10.22190/Teme191114006r., էջ 16 ([https://www.researchgate.net/publication/341120180\\_STATE\\_LIABILITY\\_FOR\\_NON-PECUNIARY\\_DAMAGES\\_IN\\_THE\\_JURISPRUDENCE\\_OF\\_THE\\_EUROPEAN\\_COURT\\_OF\\_HUMAN\\_RIGHTS\\_ODGOVORNOST\\_DRZAVA\\_ZA\\_NEMATERIJALNU\\_STETU\\_U\\_JURISPRUDENCIJI\\_EVROPSKOG\\_SUDA\\_ZA\\_LUDSKA\\_PRAVA](https://www.researchgate.net/publication/341120180_STATE_LIABILITY_FOR_NON-PECUNIARY_DAMAGES_IN_THE_JURISPRUDENCE_OF_THE_EUROPEAN_COURT_OF_HUMAN_RIGHTS_ODGOVORNOST_DRZAVA_ZA_NEMATERIJALNU_STETU_U_JURISPRUDENCIJI_EVROPSKOG_SUDA_ZA_LUDSKA_PRAVA) հղումը 20.02.2022թ. դրությամբ):

6. Stribis, Ioannis. «Damages for the Infringement of Human Rights by the Public Authority in Greece.» Ius Comparatum - Global Studies in Comparative Law (2016): 137–167, ([https://www.academia.edu/28132287/Damages\\_for\\_the\\_Infringement\\_of\\_Human\\_Rights\\_by\\_the\\_Public\\_Authority\\_in\\_Greece](https://www.academia.edu/28132287/Damages_for_the_Infringement_of_Human_Rights_by_the_Public_Authority_in_Greece) հղումը 20.02.2022թ. դրությամբ):

7. Վճռաբեկ դատարանի թիվ ՎԳ/1761/05/14 վարչական գործով 26.12.2016 թ. որոշում:

8. Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԳ/3296/02/14 քաղաքացիական գործով 27.12.2017 թ. որոշում:

9. ԵՄ արդարադատության դատարանի թիվ C-6/90 և C-9/90 Francovich, Bonifaci and others V Italy միացված գործերով 1991 թվականի նոյեմբերի 19-ի վճիռ:

10. ԵՄ արդարադատության դատարանի թիվ C-46/93 Brasserie du PUcheur SA v Bundesrepublik Deutschland գործով 05.03.1996թ. վճիռ:

11. ԵՄ արդարադատության դատարանի թիվ C-48/93 The Queen v Secretary of State for Transport, ex parte: Factortame Ltd and others գործերով վճիռ:

12. Apicella v. Italy, App. No. 64890/01 (Eur. Ct. H.R. March 29, 2006) գործով ՄԻԵԴ-ի վճիռ:

13. Gridin v. Russia, App. No. 4171/04 (Eur. Ct. H.R. June 1, 2006) գործով ՄԻԵԴ-ի վճիռ:

14. Peck v. United Kingdom, App. No. 44647/98, (Eur. Ct. H.R. January 28, 2013) գործով ՄԻԵԴ-ի վճիռ:

15. Varnava and others v. Turkey, App. Nos. 16064/90, 16065/90, 16066/90, 16068/90, 16069/90, 16070/90, 16071/90, 16072/90, 16073/90 գործով ՄԻԵԴ-ի վճիռ:



Элина Гегамян

Ассистент главного принудительного исполнителя РА,  
аспирант юридического факультета ЕГУ

Арман Акобджян

«Варданын и партнеры» ООО, Юрист

## РЕЗЮМЕ

*Некоторые вопросы по предпосылкам возмещения нематериального ущерба  
причиненном администрированием*

Провозглашение права на возмещение неимущественного ущерба, причиненного администрированием без выяснения предпосылок возмещения недостаточно, чтобы считать реализацию этого права гарантированным.

В данной научной статье рассматриваются наличие нематериального ущерба и незаконность администрирования, анализируется их сущность как предпосылок для возмещения неимущественного вреда - в контексте отечественного и международного законодательства и теоретических источников, правовых позиций ЕСПЧ, Кассационного суда Республики Армения и Суда Европейского Союза.

В результате авторы приходят к выводу, что факт нарушения незаконным администрированием основных прав или свобод не может быть предметом рассмотрения в рамках процедуры возмещения нематериального ущерба. Между тем, факт существования нематериального ущерба должен быть включен в предмет доказывания, а бремя доказывания данного факта лежит на потерпевшем.

*Ключевые слова: неправомерное администрирование, право на компенсацию ущерба, причиненного администрированием, нематериальный ущерб, ущерб, причиненный нарушением основных прав и свобод, компенсация за нематериальный ущерб, предпосылок возмещения вреда.*

Elina Geghamyan

Assistant to the Chief Compulsory Enforcement Officer of the RA  
Postgraduate student of YSU Faculty of Law

Arman Hakobjanyan

«Vardanyan &amp; partners» LLC, Lawyer

## SUMMARY

*Some issues on preconditions of remuneration of non-pecuniary damage caused by administration*

The mere declaration of the right to compensation of non-pecuniary damage caused by administration is not enough to guarantee the execution of that right if the preconditions of remuneration are not clarified.

The existence of non-pecuniary damage and the illegality of administration are discussed in this scientific article and their essence as preconditions for compensation of non-property damage is analyzed – in the context of domestic and international legislation and theoretical sources, legal positions of the ECHR, the Cassation Court of the Republic of Armenia and the Court of Justice of the European Union.

As a result, the authors conclude that the fact of violation of fundamental rights or freedoms by illegal administration cannot be subject to examination during the procedure of remuneration of non-pecuniary damage. Meanwhile, the fact of the existence of non-pecuniary damage shall be included in the scope of facts to be proven with the injured entity bearing the burden of proof of that fact.

*Key words: Illegal administration, right to compensation of damage caused by administration, non-pecuniary damage, damage caused by violation of fundamental rights and freedoms, compensation for non-pecuniary damage, preconditions of remuneration of damage.*

Բնագիրը ներկայացվել է 10.03.2022թ.

Ընդունվել է տպագրության 14.03.2022թ.

Հոդվածը երաշխավորել է տպագրության (գրախոսվել է) իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Գանիելյանը